




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» մարտի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի  
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Հ. Թունյան

ԳԲԽ-04/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 11.03.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

**1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 11.03.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ս.թ մարտի 2-ին հայտարարվել է 2014թ. ֆինանսատնտեսական

գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման «ՄՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով ընթացակարգ: Ընթացակարգի հրավերի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված աուդիտորական կազմակերպություններին և աշխատակազմին առաջադրվել է հետևյալ որակավորման պահանջները՝

1. «Մասնագիտական փորձառություն» չափանիշով նշված է, որ նմանատիպ են համարվում առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցումը:

2. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով նշված է, որ աուդիտ հրականացնող մասնակիցը պետք է ներկայացնի երեք որակավորված աուդիտոր, ովքեր պետք է ունենան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված սահմանված ձևի վկայական: Այդ անձինք պետք է ունենան ոչ պակաս երեք տարվա մասնագիտական, աշխատանքային փորձառություն առողջապահական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենքի) 26-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերությունը դիմել է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով պարզաբանել հրավերում սահմանված վերոհիշյալ պահանջները ներառելու հիմքերը, գտնելով, որ դրանք անհիմն կերպով սահմանափակում են մրցակցությունը:

2015թ. մարտի 9-ին «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ընկերությանը տրամադրվել է պարզաբանում, որտեղ հղում է կատարվել մի շարք որոշումների և առողջապահական ոլորտին վերաբերվող այլ հրավական ակտերի վրա, որոնց Ընկերությունը քաջատեղյակ է, սակայն դրանք հիմք չեն հրավերում նման պահանջ ներառելու համար: Հղում է կատարվել նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 81-րդ և 85-րդ կետերին: Կարգի 81-րդ կետով սահմանված է նախկինում կատարված աշխատանքների գումարային պահանջները՝ ըստ կնքվելիք պայմանագրի գնի տոկոսային արտահայտությամբ, իսկ 85-րդ կետով սահմանվել է, որ գործարքները համարվում են համանման, եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբում: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական

գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները՝ ըստ ոլորտների: Հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն նշել է, որ աուդիտորական ծառայությունները Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիայի հիման վրա, որը հնարավորություն է տալիս իրականացնել աուդիտորական աշխատանքներ՝ այդ թվում առողջապահական ոլորտում:

Ընկերությունը հայտնել է, որ նշված սահմանափակումներն անհիմն կերպով բարդացնում են գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորությունը և սահմանափակում մրցակցությունը, ինչն արգելված է՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի: Նշված սահմանափակումների արդյունքում տվյալ պահանջներին բավարարում է ընդամենը մեկ կամ երկու աուդիտորական ընկերություն:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն գտնում է, որ «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով և Կարգի 85-րդ կետով սահմանված պահանջները:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ համարել «ՊԸԾԶԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով գնման ընթացակարգը, հայտարարել նոր ընթացակարգ, որը կհամապատասխանի «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

## **2. «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը**

Ընկերության 11.03.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.03.2015թ. թիվ 82 գրությամբ հայտնել է, որ կազմակերպության

կարիքների համար 2014թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Կարգի 81-րդ և 85-րդ կետերին համապատասխան՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվել են «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները և դրանց գնահատման կարգը:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշի համար սահմանվել է, որ նմանատիպ են համարվում առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցումը:

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի համար սահմանվել է, որ աուդիտ իրականացնող մասնակիցը պետք է ներկայացնի երեք որակավորված աուդիտոր, ովքեր պետք է ունենան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված սահմանված ձևի վկայական: Նշված անձինք պետք է ունենան ոչ պակաս երեք տարվա մասնագիտական, աշխատանքային փորձառություն առողջապահական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտում:

Նշված չափանիշներում առկա պահանջները սահմանվել են հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն հանդիսանում է առողջապահական ոլորտի կազմակերպություն և ՀՀ կառավարության, ինչպես նաև լիազոր մարմնի (ՀՀ առողջապահության նախարարության) կողմից սահմանված են ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր, այդ թվում նորմատիվներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են առողջապահական կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն 2015թ. մարտի 6-ին դիմում է ներկայացրել Պատվիրատուին՝ Ընթացակարգի հրավերում վերոհիշյալ պահանջները ներառելու վերաբերյալ պարզաբանում տալու և հրավերում փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Ի պատասխան Ընկերության ներկայացրած դիմումի՝ Պատվիրատուն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով, տվել է պարզաբանում, ինչ հաջորդ օրը հրապարակվել է [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում:

Պատվիրատուն հայտնել է, որ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանվում են գնումների գործընթացի հետ կապված հետևյալ սկզբունքները՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

«ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների գործընթացը կարգավորող ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն առաջնորդվել է Կարգի 41-րդ և 43-րդ կետերով՝ ապահովելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքները:

«Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում ներառված պահանջներն ընդհանուր են բոլոր մասնակիցների համար, չեն սահմանափակում մասնակցելու իրավունքն անկախ մասնակցի օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

«ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանվել են միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված չափանիշներ: Սահմանված չափանիշներն անհիմն կերպով չեն բարդացնում կամ պարզեցնում հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին: Դրանք համարժեք են՝ ուղղակիորեն բխում են պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից: «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում ներառված պահանջների բացակայությունն անհիմն կերպով կպարզեցնեք հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Անհասկանալի է, թե տվյալ հոդվածի պահանջներից որն է խախտվել հրավերում և ինչպես են դրանք կապված որակավորման չափանիշների հետ, որոնք ըստ բողոքարկողի խախտվել են:

Գնման առարկայի բնութագրերը կազմվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Գնման առարկայի բնութագիրն ամբողջությամբ և հստակ նկարագրում է ձեռքբերվող ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Ընթացակարգի հրավերում պահպանվել է Կարգի 85-րդ կետով նախատեսված պահանջը, որի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Հրավերով սահմանված փորձառության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ընթացակարգի հավանական մասնակից կազմակերպությունների կողմից նմանատիպ փորձի առկայությունը (նախկինում իրականացված համանման (նմանատիպ) աշխատանքների և աշխատակազմում ընդգրկող մասնագետների փորձառության առումով) միանշանակ կօժանդակի Պատվիրատուի 2014թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի՝ ՖՀՄՄ-ներին և ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան առավել արդյունավետ և օբյեկտիվ, սեղմ ժամկետներում իրականացմանը:

Ընկերությունը բողոքում նշել է, որ նախատեսված սահմանափակումների արդյունքում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին բավարարում է միայն մեկ կամ երկու աուդիտորական ընկերություն, ինչն անհիմն է, քանի որ 2015թ.

մարտի 12-ի «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստին հայտեր են ներկայացրել թվով յոթ կազմակերպություններ («Գրանթ Թորնթոն» ՓԲԸ, «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ, «Էյ-Էմ-Էյ Աուդիտ» ՓԲԸ, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ, «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ, «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ):

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ հրավերով սահմանված չեն որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք համարժեք չեն, ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հովածի 4-րդ մասի 3-րդ կետի, և որակավորման պահանջները խտրական չեն ու չեն սահմանափակում մրցակցությունը, անհիմն կերպով չեն բարդացնում կամ պարզեցնում հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հովածի 4-րդ մասի 2-րդ կետի:

Ի լրումն 17.03.2015թ. թիվ 82 գրության՝ Պատվիրատուն 19.03.2015թ. թիվ 88 գրությամբ ներկայացրել է լրացուցիչ փաստաթղթեր՝ ՀՀ կառավարության, ինչպես նաև լիազոր մարմնի (ՀՀ առողջապահության նախարարության) կողմից սահմանված ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր, այդ թվում նորմատիվներ, որոնք վերաբերում են առողջապահական կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությանը: Մասնավորապես, ներկայացվել են «Բժշկական հիմնական սարքավորումների առավելագույն ժամկետները սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. մարտի 28-ի N 06-Ն, «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 1-ի N 201-Ն, «Ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 11 օգոստոսի 2005թ. N 1599-Ն, «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն որոշումները, «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերպման չափորոշիչն հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. նոյեմբերի 22-ի N 75-Ն, «Բժշկական հաստատություններում (արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող) դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, բաշխման, պահպանման և հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2007թ. հունվար 26-ի N 121-Ա հրամաններն ու այլ փաստաթղթեր:

### **3. ԳԲԽ-04/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 11.03.2015թ. ներկայացրած բողոքը, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.03.2015թ. թիվ 82 գրությունը, 19.03.2015թ. թիվ 88 գրությունը և կից փաստաթղթերը, «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-04/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

««Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նոխորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նմանատիպ են համարվում առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցումը:

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները:

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար նույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

Ընդ որում աշխատանքային ռեսուրսներին առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

2) մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են. աուդիտ իրականացնող մասնակիցը պետք է ներկայացնի երեք որակավորված աուդիտոր, ովքեր պետք է ունենան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված սահմանված ձևի վկայական: Նշված անձինք պետք է ունենան ոչ պակաս երեք տարվա մասնագիտական, աշխատանքային փորձառու-

թյուն առողջապահական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտում:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում մասնակցի հայտը մերժվում է»:

**4. ԳԲԽ-04/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.**

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

- պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 81-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, նույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե մինչև երեք հարյուր հիսուն միլիոն դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ գործարքները համանման են համարվում, եթե դրանք դասվում են համանման համարվող միևնույն տնտեսական գործունեության խմբում, մինչդեռ, Պատվիրատուն Հրավերի 1-ին մասի 2.3 կետում սահմանելով, որ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ծառայության համար նմանատիպ են համարվում միայն առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցումը, խախտել է Կարգի 85-րդ կետով սահմանված պահանջը և Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված սկզբունքները:

2. Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնումների պլանը հաստատվելու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում է գնման հայտը, որը ներառում է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատելու նպատակով նախատեսված «աուդիտ իրականացնող մասնակիցը պետք է ներկայացնի երեք որակավորված աուդիտոր, ովքեր պետք է ունենան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված սահմանված ձևի վկայական: Նշված անձիք պետք է ունենան ոչ պակաս երեք տարվա մասնագիտական, աշխատանքային փորձառություն առողջապահական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտում» պահանջները հակասում են Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի վերոնշյալ պարբերությամբ սահմանված պահանջին, քանի որ նշված պարբերության համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին

վերաբերող վերոհիշյալ պահանջները սահմանվում է միայն շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում:

Այսպիսով, գտնում ենք, որ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը հակասում է Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության 2-րդ մասով, 81-րդ կետի 1-ին ենթակետով և 85-րդ կետով սահմանված պահանջներին, որով խախտվում են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված սկզբունքները, որպիսի հիմքերով Ընթացակարգը հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումն ենթակա է դադարեցման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 11.03.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՁԻԱՀ-ՊԸԾՁԲ-ՖՏԱ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝



Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-04/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ռ. Մկրտչյան